ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 142 Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի և ՀՀ վարչապետի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N 1217-Ա որոշման պահանջներին համապատասխան ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետև՝ Բանկ) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել Բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի N 142 Ա որոշմամբ հաստատված Բանկի 2017 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը՝ ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժբ2» կետի պահանջի համաձայն սույն եզրակացությունը տրվում է Բանկի կողմից ներկայացված՝ վերը նշված փաստաթղթերի վերաբերյալ:

Ա. Վարչական ծախսերի նախահաշվի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

1. Ըստ Բանկի 2017 թվականի վարչական ծախսերի նախահաշվի (այսուհետև՝ Նախահաշիվ), 2017 թվականին Բանկի վարչական ծախսերը կկազմեն 7,163.6 մլն դրամ, որը 2016 թվականի համար «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ 2016 թվական) հաստատված համապատասխան ցուցանիշից

ավելի է 1.4 %-ով կամ 96.6 մլն դրամով: Ինչպես և նախկինում Բանկի 2017 թվականի վարչական ծախսերի գերակշիռ մասը բաժին է ընկնում Բանկի ապարատի պահպանման ծախսերին, որը կազմում է ծրագրվող վարչական ծախսերի 96.7 %-ը: Ընդ որում, 2016 թվականի համար օրենքով հաստատված վարչական ծախսերի ցուցանիշի նկատմամբ 2017 թվականի համար ծրագրավորվող համապատասխան ցուցանիշի գերազանցումն ամբողջությամբ ապահովվում է Բանկի ապարատի պահպանման ծախսերի աճի շնորհիվ:

2. Ըստ Նախահաշվի, 2017 թվականին Բանկի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել են 6,929.0 մլն դրամի չափով, որը 2016 թվականի համապատասխան ցուցանիշից ավելի է 1.5 %-ով կամ 100.3 մլն դրամով: Բանկի ապարատի պահպանման 2017 թվականի ծախսերի 91.8 %-ը (2016 թվականի՝ 91.4 %-ի դիմաց) կամ 6,360.6 մլն դրամը բաժին է ընկնում Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ պարգևատրումը և նյութական խրախուսումը) և սոցիալական ապահովության գծով ծախսերին:

2.1. Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ աշխատավարձին հավասարեցված միջոցների) գծով ծախսերը 2016 թվականի համար հաստատված 5,821.4 մլն դրամի դիմաց, ըստ Բանկի կողմից ներկայացված Մեկնաբանության (այսուհետ՝ Մեկնաբանություն), 2017 թվականին նախատեսվել է 5,938.1 մլն դրամ (116.7 մլն դրամ կամ 2.0 % աճով): Մեկնաբանության համաձայն Բանկի աշխատակիցների աշխատավարձի և նրան հավասարեցված միջոցների հաշվարկը կատարվել է՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի «զ» ենթակետի պահանջներից, համաձայն որի Բանկի աշխատակիցների աշխատավարձի միջինը պետք է համապատասխանի ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձին: Բանկի աշխատակիցների միջին աշխատավարձը 2017 թվականի համար ընդունվել է 603.5 հազ. դրամ, որը 2016 թվականի համար նախատեսված նույն ցուցանիշից ավելի է 17.6 հազ. դրամով կամ 3.0 %-ով (ըստ Մեկնաբանության, 2017 թվականի համար ՀՀ առևտրային բանկերի կողմից ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձի չափը կանխատեսվում է 697.0 հազ. դրամ): Աշխատավարձի գծով ծախսերի աճը պայմանավորված է Բանկում գործող վարձատրության կանոններով նախատեսված աշխատավարձի բնականոն աճով: Հարկ է նշել նաև, որ աշխատավարձի 2017 թվականի հաշվարկը կատարվել է 820 աշխատակցի հաշվով՝ 2016 թվականի 828 աշխատակցի փոխարեն:

Սոցիալական ապահովության այլ ծախսերի գծով Նախահաշվով նախատեսված է 422.5 մլն դրամ՝ 2016 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշի մակարդակով: Վերը

նշված ծախսերը նախատեսված են Բանկի աշխատակիցների առողջության ապահովման և այլ ծախսերը հոգալու համար: Հաշվարկը կատարվել է 2017 թվականին կանխատեսվող Բանկի հաստիքացուցակի համար:

2.2. Ռազմավարական խնդիրների իրականացման գործում կարևորելով Բանկի անձնակազմի մասնագիտական գիտելիքների խորացման և հմտությունների զարգացման նպատակով Բանկի աշխատակիցների ուսուցումը և վերապատրաստումը՝ 2017 թվականին Բանկը կշարունակի ապահովել իր աշխատակիցների մասնակցությունն ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ արտասահմանում վերապատրաստման ծրագրերին, ուսուցողական և փորձի փոխանակման այցերին: Բացի այդ, Բանկը անդամակցելով որոշակի միջազգային կառույցների, ուղղակի պարտավորություններ ունի ներկայացուցչություն ապահովելու այդ կառուցների կողմից կազմակերպվելիք համաժողովներին, տարեկան հանդիպումներին: Այդ նպատակով Բանկի 2017 թվականի գործուղման ծախսերը (ներառյալ անձնակազմի ուսուցման և վերապատրաստման ծախսերը) նախատեսվում են 434.5 մլն դրամի չափով կամ 2016 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշին հավասար:

2.3. Բանկի 2017 թվականի ներկայացուցչական ծախսերը ծրագրվել են 54.2 մլն դրամ կամ 2016 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշի մակարդակով: Ըստ Մեկնաբանության, 2017 թվականին նախատեսվում է մի շարք միջազգային պատվիրակությունների ընդունելություններ, օտարերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների այցեր՝ համատեղ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ քննարկումների և բանակցությունների նպատակով:

2.4. Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման և սպասարկման 2017 թվականի ծախսերը նախատեսվել են 79.7 մլն դրամի չափով, որը 2016 թվականի մակարդակից պակաս է 16.4 մլն դրամով կամ 17.0 %-ով: Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերի հաշվարկները, ինչպես և 2016 թվականին, կատարվել են 31 ավտոմեքենայի համար՝ հիմք ընդունելով շուկայում գործող գները և 2016 թվականին Բանկի կողմից վառելիքի ձեռքբերման և ավտոմեքենաների տեխսպասարկման համար կնքված պայմանագրերը:

3. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսերը 2017 թվականին կկազմեն 61.3 մլն դրամ, 2016 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշի մակարդակին հավասար:

4. Բանկի ծառայողների աշխատանքի համար նորմալ պայմաններ ապահովելու նպատակով տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված 2017 թվականի ծախսերը Բանկի կողմից նախատեսվում են 114.5 մլն դրամի չափով, որը 0.4 մլն դրամով կամ 0.3 %-ով զիջում է 2016 թվականի համար նախատեսված համապատասխան ցուցանիշը: Տնտեսական ծախսերը հիմնականում ներառում են Բանկի շենքերի սպասարկման հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

5. 2017 թվականի ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը նախատեսվում են 38.9 մլն դրամ, որը 2016 թվականի ծրագրային նույն ցուցանիշը զիջում է 3.4 մլն դրամով կամ 8.0 %-ով:

6. Չնախատեսված ծախսերի գծով Նախահաշվում նախատեսված է 20.0 մլն դրամ՝ 2016 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշի մակարդակով: Չնախատեսված ծախսերը կազմում են Բանկի 2017 թվականի համար ծրագրվող վարչական ծախսերի ընդհանուր ծավալի 0.3 %-ը:

Բ. Կապիտալ ներդրումների ծրագրի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Բանկի կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը 2017 թվականի համար Բանկի կողմից առաջարկվում է սահմանել 24,132.5 մլն դրամի չափով, որը 2016 թվականի ծրագրային նույն ցուցանիշից պակաս է 8,556.6 մլն դրամով կամ 26.2 %-ով:

Փոփոխության են ենթարկվել նաև կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում առանձին տարրերի տեսակարար կշիռները:

Մասնավորապես, 2017 թվականի համար Բանկի կողմից նախատեսվում է ծրագրված կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակի.

ա) 82.0 %-ը կամ 19,800.0 մլն դրամն ուղղել այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ներդրմանը (2016 թվականին այս տարրը կազմում էր կապիտալ ներդրումների ծրագրային ցուցանիշի 89.6 %-ը): Նշված գումարը 9,500.0 մլն դրամով կամ 32.4 %-ով զիջում է 2016 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշին: Իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ներդրումները նախատեսվում են՝

- «Ազգային հիփոթեքային ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ-ների մասով՝ 19,500.0 մլն դրամ, ինչը պայմանավորված է պետական վարկային ծրագրերին (հիփոթեքային վարկավորման ծրագրեր, այդ թվում՝ պետական ծառայողների, գիտնականների, երիտասարդ ընտանիքների, բնակարանների վերանորոգման և այլ հիփոթեքային ծրագրեր, զինծառայողների սպառողական, մատչելի ուսանողական և այլ վարկավորման ծրագրեր) մասնակցության հնարավորությունների ավելացման նպատակով այս կառույցների զարգացման անհրաժեշտությամբ,

- «Հայինկասացիա» ՓԲԸ-ի մասով՝ 300.0 մլն դրամ (պայմանավորված է այս ընկերության տեխնիկական վերազինման անհրաժեշտությամբ).

բ) 8.9 %-ը կամ 2,155.5 մլն դրամի չափով գումար հատկացնել համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների, Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ (այդ թվում՝ անվտանգության ապահովման համար) հիմնական միջոցների ձեռքբերման և կապիտալ վերանորոգման համար: Նշված գումարը 227.4 մլն դրամով կամ 11.8%-ով գերազանցում է 2016 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշը (2016 թվականին ծախսային այս տարրը կազմում էր կապիտալ ներդրումների ծրագրային ցուցանիշի 5.9 %-ը): Նշված խումբ ծախսերի ծրագրված գումարով նախատեսվում է ձեռք բերել.

- 1,993.0. մլն դրամի համակարգչային տեխնիկա (կազմում է այս խումբ ծախսերի 92.5 %-ը՝ 2016 թվականի 93.9 %-ի դիմաց): 2017 թվականի համար նախատեսված գումարը գերազանցում է 2016 թվականի ծրագրային մակարդակը 181.6 մլն դրամով կամ 10.0 %-ով,

- 63.2 մլն դրամի գրասենյակային գույք, կապի միջոցներ և Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 2.9 %-ը՝ 2016 թվականի 3.4 %-ի դիմաց), պակաս է 2016 թվականի ծրագրային մակարդակից 1.6 մլն դրամով կամ 2.5 %-ով,

- 97.9 մլն դրամի անվտանգության ապահովման համար հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 4.5 %-ը), 2016 թվականի ծրագրային մակարդակից ավել է 49.7 մլն դրամով կամ 103 %-ով,

- 1.3 մլն դրամի էմիսիոն և կանխիկ դրամով գործառնությունների ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 0.1 %-ը): 2017 թվականի համար նախատեսված գումարը 2016 թվականի ծրագրային մակարդակից պակաս է 2.3 մլն դրամով կամ շուրջ 2.7 անգամ:

գ) 8.9 %-ը կամ 2,146.00 մլն դրամն առանձնացնել Բանկի աշխատանքային շենքերի և շինությունների կառուցման, ձեռքբերման և կապիտալ վերանորոգման համար: Նշված գումարը գերազանցում է 2016 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշին 766.0 մլն դրամով կամ 55.5 %-ով (2016 թվականին այս տարրը կազմում էր կապիտալ ներդրումների ծրագրային ցուցանիշի 4.2 %-ը): Նշված գումարը պլանավորվում է ծախսել Դիլիջան քաղաքում նոր բնակելի շենքի և հակասողանքային աշխատանքների իրականացման համար:

դ) 0.1 %-ը կամ 31.0 մլն դրամը հատկացնել վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումներին (2016 թվականի ծրագրային մակարդակից պակաս է 50.0 մլն դրամով կամ շուրջ 61.7 %-ով)՝ Բանկի ավտոպարկը նորացնելու նպատակով 1 ավտոբուսի ձեռքբերման համար (2016 թվականին այս տարրը կազմում էր կապիտալ ներդրումների ծրագրային ցուցանիշի 0.2 %-ը):

Ամփոփելով վերը նշվածը, գտնում ենք, որ Բանկի կողմից ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար ներկայացված Բանկի խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի N 142-Ա որոշմամբ որոշմամբ հաստատված Բանկի 2017 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը՝ կազմված են օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ: